ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԵՐԲԵՐՅԱՆ ՎԱԼՏԵՐ ՏԻԳՐԱՆԻ

«ՀԱՅ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (1950 - 2020-ԱԿԱՆ ԹԹ.)»

Ժ. 02.01-«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ **Ավետիսյան Յուրիկ Սրապիոնի**
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **Շահվերդյան Թերեզա Սարգսի**
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Ավագյան Արմենուհի Արտուշի

բանասիրական գիտությունների թեկնածու,

դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ **Խ. Աբովյանի անվան հայկական**

պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հունվարի 26-ին, ժամը՝ 15^{00}-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 019 Լեզվաբանություն մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ **ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստրտուտի** գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թվականի դեկտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ **Ն. Սիմոնյան**
բան. գիտ. թեկնածու, դոց.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ընդունված իրողություն է լեզվաբանության զարգացման ընթացքային մի պահի կանգ առնել և քննական հայացքով ամփոփել ձեռքբերումները: Մեզանում կան հիմնարար աշխատություններ՝ նվիրված անվանի լեզվաբանների (Մ. Աբեղյան, Ա. Այտընյան և այլք) գիտական ժառանգությանը: Գ. Ջահուկյանը ներկայացրել է լեզվաբանության պատմությունը, Ս. Գյուլբուդաղյանը անդրադարձել է արևելահայ քերականագիտական մտքի զարգացմանը: Հայ ոճագիտական միտքն ունի ավելի քան կեսդարյա զարգացման ընթացք: Ստեղծվել են տասնյակ մենագրություններ, հոդվածներ, որոնց վերաբերյալ ժամանակն է վերլուծական հստակ վերաբերմունք դրսևորելու: Մանավանդ եթե նկատի առնենք ոճագիտության և խոսքի մշակույթի արագ զարգացումը, ապա, կարծում ենք, որոշակի գնահատումներով եղածն ի մի բերելը անհրաժեշտություն է:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել հայ ոճագիտական մտքի ձևավորման ու զարգացման պատմությունը՝ 1950-ականներից մինչև մեր օրեր: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել հայոց լեզվի ոճական համակարգի մասին 1950–ական թթ. մինչև մեր օրերը գրված աշխատանքները,
2. քննական հայացքով վերլուծել այդ աշխատանքները,
3. բացահայտել հայ ոճագիտական մտքի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները:

Ատենախոսության գիտական նորույթը: Չենք սխալվի, եթե ասենք, որ այս ձեռնարկումը մեզանում նմանօրինակ աշխատանքի առաջին փորձն է: Թեև վերջին տասնամյակներում ոճագիտության վերաբերյալ լույս են տեսել մի շարք աշխատանքներ, որոնցում կան ոճագիտության տարբեր հարցերի հետ առնչվող հետաքրքիր և արժեքավոր դիտարկումներ, բայց հայ ոճագիտական մտքի պատմության ամբողջական քննությունը դուրս է մնացել լեզվաբանների ուշադրությունից:

Աշխատանքի մեթոդաբանությունը: Աշխատանքը կատարվել է մի քանի մեթոդների կիրառմամբ: Համակցվել են նկարագրական, վերլուծական, համեմատական մեթոդները: Մեթոդաբանական հիմք է դարձել եղած տեսական դրույթների համադրումը: Հետազոտությունը ներկայացրել ենք ըստ լեզվի մակարդակների և ըստ ժամանակագրության:

Ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է «Ներածություն»-ից, հինգ գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, գրականության ցանկից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 122 էջ:

Ներածության մեջ ամփոփ ներկայացրել ենք ոճագիտության ձևավորման պատմությունը: Ոճական երևույթների մասին առաջին պատկերացումները ձևավորվել են հնագույն ժամանակներում Հունաստանում: Ոճագիտությունը լեզվաբանության մեջ առանձին գիտակարգ է դիտվել 20-րդ դարի 20–ական թվականներից: Շ. Բալլին է համարվում հեղինակը ոճագիտության վերաբերյալ առաջին հիմնարար ուսումնասիրության, այն է՝ «Տրակտատ ֆրանսերենի ոճաբանության»: *Ոճագիտություն* տերմինը առաջին անգամ վկայվել է Օքսֆորդի բառարանում 1882 թ.: Ներկայացրել ենք նաև, թե ինչ են բովանդակում տարբեր ժամանակներում հայ լեզվաբանների կողմից Հայաստանում և արտերկրում հրատարակված բառարանները «ոճագիտություն» տերմինի վերաբերյալ: Անդրադարձել ենք մի քանի լեզվաբանների դիտարկումների, որոնք փորձել են բնութագրել ոճագիտության ձևավորումը:

Հայ ոճագիտական մտքի պատմության մեջ առանձնանում են շրջափուլեր, որոնք բնութագրվում են ոճագիտական խնդիրների ուսումնասիրության որոշակի առաջնահերթություններով և նյութի վերլուծության գիտականությամբ: Դրանք հետևյալներն են՝ ա. հայ ոճագիտական միտքը 1950-60-ական թթ., բ. հայ ոճագիտական միտքը 1970-90-ական թթ., գ. հայ ոճագիտական միտքը 2000-2020-ական թթ.: Հետազոտության նպատակների ու խնդիրների պարզաբանմամբ հիմնավորվում է ատենախոսության արդիականությունը:

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

1.1. ԲԱՂԱՁԱՅՆՈՒՅԹ, ԱՌՁԱՅՆՈՒՅԹ, ՆՄԱՆԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության առաջին գլխի այս ենթաբաժնում ներկայացված են հնչյունային ոճագիտության զարգացման հիմնախնդիրները (1950-2020-ական թթ.): Ուսումնասիրվել են հայոց լեզվի հնչյունային ոճագիտության մասին գրված կարևոր աշխատանքները, տարբեր հետազոտություններում առկա դրույթները: Անդրադարձ է կատարվել հնչյունային ոճագիտության հիմնական բաղադրիչներին՝ բաղաձայնույթ, առձայնույթ, նմանաձայնություն: Հարցին նվիրված ուսումնասիրություններից առանձնանում է Ֆ. Խլղաթյանի «Հնչյունային ոճաբանություն» ծավալուն և մեծարժեք հոդվածը, որով, ըստ էության, հիմք դրվեց հնչյունային ոճաբանության հարցերի գիտական համակարգված վերլուծությանը:

Բաղաձայնույթ: Հնչյունային ոճագիտության այս բաղադրիչը, ինչպես սկզբնական շրջանում նկատել են օտար լեզվաբանները, առավել բնորոշ է գեղարվեստական խոսքին, մասնավորաբար՝ չափածոյին: Սովորաբար դիտարկվում է բանաստեղծական բնագիրը՝ նկատի ունենալով հնչյունական հատկանիշներով իրար մոտ հնչյունները: Բաղաձայնույթի՝ որպես հնչյունային ոճագիտության հիմնական բաղադրիչի ոճական-արտահայտչական յուրահատկություններին ավելի վաղ են անդրադարձել օտար, մասնավորաբար՝ ռուս և անգլիացի լեզվաբանները[1]:

Առձայնույթ: Առձայնույթը բանաստեղծականություն ու մեղեդայնություն ստեղծելու նպատակով նույն կամ նույնորակ ձայնավորների կուտակումն է[2]: Ի տարբերություն բաղաձայնույթի՝ առձայնույթը գործածականությամբ աչքի չի ընկնում: Լեզվաբանները նկատել են, որ առձայնույթը հաճախ զուգակցվում է բաղաձայնույթի հետ: Հայ ոճագիտության մեջ համեմատաբար քիչ են անդրադարձել առձայնույթին:

Նմանաձայնություն: Պ. Պողոսյանը մեզանում թերևս առաջինն է ներկայացրել բնաձայնությունների ոճական գործածությունը խոսքում: Ըստ նրա՝ բնաձայնությունները բնույթով տարբեր են դատողական խոսքի մասերից, դրանց սպասարկող խոսքի մասերից, ձայնարկություններից ու կամային բառերից[3]: Սրանք ոճագետը անվանում է ոչ լիարժեք բառեր: Խոսքում բնաձայնությունները (*վըշշ, բըխկ, չըխկ, դըռռ, հաֆ, միաու* և այլն) դիտարկվում են նախադասության կապակցությունից դուրս ձևեր:

Հայ ոճագիտական տերմինաբանության մեջ առկա են թե՛ նմանաձայնություն, թե՛ բնաձայնություն անվանումները: Սրանք զուգընթաց գործածվել են՝ համարվելով հանձնարարելի տարբերակներ:

1.2. ՀՆՉԵՐԱՆԳ, ԴԱԴԱՐ, ՇԵՇՏ, ՀԱՆԳ

Հնչերանգ: Հարցի ուսումնասիրության ասպարեզում մեծ է Էդ. Աղայանի դերը: Ըստ նրա՝ հնչերանգը ձայնային-առոգանական տարրերի բարդ ամբողջությունն է, որը բաժանվում է հետևյալ կարգերի՝ շեշտային հնչերանգներ, առոգանական հնչերանգներ, սահմանային-զատական հնչերանգներ[4]: Լեզվաբանը կիրառում է նաև հատուկ տերմիններ՝ *հնչերանգային ամբողջություն, հնչերանգային ավարտվածություն*:

---

[1] Առավել մանրամասն տե՛ս **L. Galperin**, Stylistics, M., 1977, էջ 126:
[2] Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, Ոճաբանական տերմինների բառարան, Եր., 1976, էջ 11:
[3] Տե՛ս **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, I, Եր., 1990, էջ 333:
[4] **Էդ. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 229:

Մեր կարծիքով Պ. Պողոսյանն առաջիններից է, որ տալիս է հնչերանգի ամբողջական բնութագիրը: Լեզվաբանը նշում է, որ խոսքի հնչերանգը պայմանավորված է խոսողի հոգեբանությամբ, խոսքի կառուցվածքով, իրադրությամբ, այն բանով, թե ում է ուղղված խոսքը և այլն[5]: Իսկապես, միևնույն բառը, բառակապակցությունը, արտահայտությունը, նախադասությունը տարբեր հնչերանգով արտասանելիս կարող են զանազան նրբիմաստներ արտահայտել:

Դադար: Ս. Արևշատյանը առաջիններից է, որ խոսում է հնչյունային ոճաբանական համակարգի այս բաղադրիչի մասին: Նա դադարը դիտարկում է խոսքի «հնչման կուլտուրա» ասվածի հիմնական բաղադրիչ, ավելին՝ առանձնացնում է դադարի 5 տեսակ՝ քերականական, տրամաբանական, հոգեբանական, ձևական, ֆիզիոլոգիական[6]:

Հնչյունային ոճագիտական մտքի պատմության մեջ հայ լեզվաբանները (Արևշատյան, Պետրոսյան, Միրզոյան և այլք) կարևորել են հատկապես տրամաբանական դադարի դերը. այն օգնում է խոսքը ճշգրիտ ձևակերպելու: Տրամաբանական դադար է տրվում նաև մտքի շփոթից խուսափելու համար:

Նշենք, որ կա դադարներն ուսումնասիրող գիտություն (ռուս.՝ паузология, անգլ.՝ pausology): ԱՄՆ առաջին պաուզոլոգը (դադարի մասնագետը)՝ պրոֆեսոր Օ'Քոնորը, կարծում է, որ դադարները մարդու մասին կարող են պատմել ոչ պակաս, քան բառերը:

Շեշտ: Ուշագրավ է, որ շեշտի և շեշտադրության վերաբերյալ վերջին որոշումը կայացրել է տերմինաբանական կոմիտեն 1957 թ.-ին: Հայ տեսական գրականության մեջ շեշտը հատուկ ուսումնասիրության նյութ դարձավ՝ սկսած 1970-ական թթ.-ից: Լեզվաբանները առանձնացրել են բառային, տրամաբանական, շարութային, քերականական, նախադասության շեշտեր:

Ոլորտի վերջին գիտական ուսումնասիրությունը Զ. Աղաջանյանի «Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում» մենագրությունն է, որի հրատարակումը, կարծում ենք, ժամանակի պահանջ էր դարձել:

Հանգ: Հայ ոճագիտական մտքի պատմության մեջ հարցին անդրադարձել են Մ. Աբեղյանը, Էդ. Ջրբաշյանը, Ա. Մարությանը, Ա. Պապոյանը, Լ. Եզեկյանը, Վ. Միրզոյանը, Թ. Շահվերդյանը, Յու. Ավետիսյանը և այլք:

Հեղինակները հանգամանորեն վերլուծել և գնահատել են արևելահայ չափածոյի տաղաչափական ամենաբազմազան յուրահատկությունները: Արևմտահայ բանաստեղծության լեզվի հանգիտության ասպարեզում

---

[5] Նույն տեղում էջ 131:

[6] Առավել մանրամասն տե՛ս **Ս. Արևշատյան**, Հռետորական արվեստի հիմունքներ, Եր., 1961:

առանձնապես ընդգծելի են Յու. Ավետիսյանի դիտարկումները, որոնք վերաբերում են Պեշիկթաշյանի, Դուրյանի, Վարուժանի, Մեծարենցի և այլոց գործերում հանգի դրսևորումներին և առհասարակ տաղաչափական խնդիրներին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՌԱՅԻՆ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

1970-80-ական թթ. լեզվաբանական գրականության մեջ հատուկ ուսումնասիրության նյութ դարձան բառային ոճագիտության հիմնահարցերը:

2.1. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՁԵՎԱՒՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնապես ուշադրության կենտրոնում են եղել առավելապես հոմանիշների և հականիշների ոճական կիրառություններին վերաբերող հարցերը: Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը բառային ոճագիտության մասին խոսելիս կարևորում են համանիշների ոճական և իմաստային նուրբ տարբերությունները, որոնք բնութագրում են այսպես՝ ա. պատկանում են գործառական տարբեր ոճերի, բ. արտահայտում են երևույթի կամ հատկության դրսևորման տարբեր չափեր, գ. կարող են արտահայտել անձնական (սուբյեկտիվ) վերաբերմունքի տարբերություններ և ունենալ հուզարտահայտչական տարբեր երանգներ[7]:

Լեզվաբանները կարծում են, որ հականիշները մեծ գործածականություն ունեն հատկապես գեղարվեստական խոսքում, ժողովրդական բանահյուսության մեջ, կիրառվում են վերնագրերում, ինչպես՝ «Պատերազմ և խաղաղություն», «Անմեղ մեղավորներ», «Կուշտը սովածին մանր կբրդի» և այլն:

Հետագա ուսումնասիրություններում բնութագրվում է նաև համանունների և հարանունների ոճական նշականությունը:

Հետաքրքիր հարցադրումներով ուշագրավ է Արտ. Պապոյանի «Բառապաշարի ոճական արժեքի մի քանի հարցեր» գիրքը, որում մեծ բանաստեղծ Պ. Սևակի չափածոյի ընձեռած նյութի հիման վրա հեղինակը քննել է նրա բառապաշարի ոճական արժեքի մի քանի հարցեր, մասնավորապես՝ բառերի իմաստային յուրահատկությունները[8]:

---

[7] Տե՛ս **Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան**, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Եր., 1976, էջ 80-81:

[8] Առավել մանրամասն տե՛ս **Արտ. Պապոյան**, Բառապաշարի ոճական արժեքի մի քանի հարցեր, Եր., 1989:

Նյութի ընդգրկմամբ և հարցադրումների խորությամբ առանձնանում է Ս. Էլոյանի «Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն» գիրքը, որին ատենախոսության մեջ հանգամանորեն անդրադարձել ենք:

2.2. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԵՐԻ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

1950-ական թթ.-ին բառագիտական հետազոտությունները տակավին գերազանցապես մնում էին լեզվական մակարդակում. կատարվում էր բառապաշարի շերտաբանական դասակարգում, նկարագրվում էին դրանց կիրառական որոշ առանձնահատկություններ:

1980-ական թթ.-ին ներկայացվում են բառապաշարի պասիվ շերտի բառերի, մասնավորապես՝ նորաբանությունների, հնաբանությունների և բարբառային-խոսակցական բառերի ոճական կիրառությունները:

Հարցի քննության պատմության մեջ հետաքրքիր հարցադրումներով ուշագրավ են Պ. Պողոսյանի դիտարկումները: Ոճագետը 1990-ական թթ.-ին տարաժամանակյա և համաժամանակյա հայեցակետերից ուսումնասիրում է բառապաշարի ոճաբանական շերտերը:

2.3. ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Որպես տերմին՝ դարձվածքը սկզբնապես ունեցել է խոսվածք, բարբառ, խոսք, արտահայտություն և այլ նշանակություններ, գործածվել է թե՛ լայն (իդիոմատիկ դարձվածքներ, կայուն բառակապակցություններ, առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, ասույթներ, աֆորիզմներ), թե՛ նեղ (միայն իդիոմատիկ դարձվածքներ) իմաստներով:

1980-90-ական թթ.-ին խնդիր առաջացավ դասակարգելու հարցի վերաբերյալ կուտակված գիտական փորձը: Երևան եկան տարաբնույթ դասակարգումներ:

Հարցի ուսումնասիրության պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի Խ. Բադիկյանի «Դարձվածային ոճաբանություն» աշխատությունը, որը հրատարակվել է 2000 թ.-ին: Հեղինակը խորությամբ ներկայացրել է դարձվածքների ձևաիմաստային տեսակների ոճական արժեքը, մենիմաստ և բազմիմաստ դարձվածքները, առանձնացրել է դարձվածային գոյականական տարբերակներ, բայական տարբերակներ, քերականական տարբերակներ (հոլովական, թվային, հարցական-ժխտական, դրական-բացասական, սեռի չեզոքացման):

Ժամանակակից լեզվաբանները, հետևելով ավանդույթին, դարձվածքները դիտարկում են որպես հայերենի բառապաշարի առանձնահատուկ ոճական շերտ: Մատնանշվում է, որ դարձվածքների միջոցով

կարելի է իրականացնել ամենատարբեր ոճական գործառույթներ: Վերջին ուսումնասիրություններում կարևորություն է տրվում ներդարձվածքային փոփոխությունների ոճական դերին:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Բ Ո Ր Դ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ
3.1. ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացրել ենք *նյութական, քերականական, վերաբերմունքային* իմաստ արտահայտող խոսքի մասերի ոճական արժեքին վերաբերող մի քանի հարցերի քննությունը՝ ըստ հայ լեզվաբանների:

1950-60 ական թթ.-ին հայերենագիտության մեջ ձևաբանության հարցերը ավելի հաճախ քննվում են զուտ լեզվական մակարդակում:

Նորագույն շրջանի ոճագիտական մտքի առաջին աշխատանքերում հիմնականում կատարվում էր խոսքի մասերի լեզվական մակարդակի նկարագրություն. ընդհանուր քերականական իմաստ, ձևաբանական առանձնահատկություն, խոսքի մասերի տեսակներ, դրանց շարահյուսական կիրառությունները: Խոսքի մասերի ոճական արժեքի քննությունը օբյեկտիվորեն մղված էր երկրորդ պլան: Աստիճանաբար երևան եկան տարբեր աշխատանքներ, որոնցում ինչ-որ չափով բացատրվում էին խոսքի մասերի ոճական գործածության նրբությունները:

Պ. Պողոսյանը «Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում» գրքում առաջին անգամ համակարգված քննում է բայի եղանակաժամանակային ձևերի ոճական գործածության հնարավորությունները:

Ձևաբանական ոճագիտության վերաբերյալ գրված աշխատանքներից առանձնանում է Ռ. Մկրտչյանի «Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն» մենագրությունը, որում հեղինակը քննել է ժամանակակից հայերենի խոսքի մասերի ոճական առանձնահատկությունները. ձևաբանական միավորների արտահայտչական հնարավորությունները քննելիս առանձին ուշադրություն է դարձրել նրանց իրավիճակային կիրառությունների ոճական արժեքի բացահայտմանը[9]: Հեղինակը վերլուծում և բնութագրում է նաև ժամանակակից ոճաբանության այնպիսի առանցքային հասկացություններ, ինչպիսիք են լեզվի և խոսքի ոճ, հաղորդողի և ընկալողի ոճաբանություն և այլն: Կարծում ենք, որ Ռ. Մկրտչյանի գիրքը հայ լեզվաբանության մեջ

[9] Առավել մանրամասն տե՛ս **Ռ. Մկրտչյան** «Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն», Եր., 1992, էջ 4:

ժամանակակից հայերենի ձևաբանական ոճագիտության վերաբերյալ ամենից հաջող գիտական ուսումնասիրությունն է:

3.2. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Քերականական ոճագիտության այս բաժնին վերաբերող սկզբնական ուսումնասիրություններում կարևորվել է նախադասությունների ճիշտ կառուցման, նպատակային կապակցման, մտքի տրամաբանական կապի ու զարգացման, կապակցման լեզվական-քերականական միջոցների նկարագրությունը: Մի շարք լեզվաբաններ պնդում են, որ ոճագիտությունը չի կարող յուրացվել, մասնավորաբար, առանց շարահյուսական հիմնավոր գիտելիքների: Ուստի ոճագիտական աշխատանքներում քերականական լրացուցիչ տեղեկությունների առկայությունը պայմանավորված է ոճագիտության պահանջներով: Մենք կարծում ենք, որ ոճագիտական աշխատանքներում լեզվական գիտելիքների, մասնավորապես քերականական տեղեկությունների մատուցումը ոճականի փոխարեն արդարացված չէ: Շարահյուսական ոճագիտությանը վերաբերող աշխատանքներում հիմնականում ներկայացվել են հետևյալ դարձույթները՝ նախադասության ներգործական և կրավորական կառույցներ, խնդրառություն, միակազմ և երկկազմ, բարդ նախադասություններ, երկրորդական նախադասություններ և դրանց կապակցության միջոցները:

2000-ական թթ.-ից հայ լեզվաբանության մեջ հատուկ ուսումնասիրության նյութ դարձան տեքստագիտության (գրվածքագիտության, բնագրագիտություն) հարցերը:

Առայսօր արդի հայերենի շարահյուսական ոճագիտության մասին ամբողջական ուսումնասիրություն չունենք:

Գ Լ Ո Ւ Խ Չ Ո Ր Ր Ո Ր Դ

ՈՃԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ. ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1. ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐ

Այս ենթագլխում վերլուծել ենք գործառական ոճերի հիմնական տեսակներին (պաշտոնական, գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական, լրագրային-հրապարակախոսական) վերաբերող և հայ ոճագիտական աշխատանքներում քննվող տարբեր դրույթներ:

Գործառական ոճերի քննությունը ուշ է արժանացել հայ լեզվաբանների ուշադրությանը: Նրանք հիմնականում հետևել են ռուս լեզվաբանության ձեռքբերումներին: Այս բնագավառի կարևոր աշխատանքներից է Լ. Եզեկյանի

«Հայերենի գործառական ոճերը» մենագրությունը (1999 թ.): Հեղինակին հաջողվել է համակարգել նյութը՝ կատարելով գործառական ոճերի դասակարգում: Լեզվաբանի կարծիքով ոճերի գործառական դասակարգման ժամանակ նախևառաջ անհրաժեշտ է ընտրել լեզվական մի քանի կարևորագույն հատկանիշներ և միայն դրանց հիման վրա կատարել համապատասխան գիտական դասակարգում, քանի որ նման դեպքում ևս անհրաժեշտ են դասակարգման գիտական հիմնավորում, որոշակի չափանիշներ[10]: Պետք է դիտարկել նախ գործառության ոլորտը, ապա ոճական հատկանիշները, կառուցվածքային մակարդակները: Հիմք ընդունելով իմաստաբանական, բառապաշարային, քերականական, հուզական-արտահայտչական հատկանիշները՝ լեզվաբանը հայերենում տարբերակում է գործառական ոճերի հետևյալ խմբերը՝ *գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, առօրյա-խոսակցական, գեղարվեստական*: Ըստ այդմ՝ քննում է այդ ոլորտներում գործածվող լեզվի առանձնահատկությունները: Լ. Եզեկյանը, ըստ էության, ամփոփել է հարցի մասին եղած ուշագրավ դիտարկումները՝ առաջադրելով գիտական դասակարգման համոզիչ սկզբունքներ:

Գործառական ոճերին նվիրված այլ աշխատանքները (Ռ. Շալունց «Մամուլի և հրապարակախոսության լեզուն», Յու. Դավթյան «Լրագրային ժանրերի լեզվաոճական արտահայտությունները», Յու. Ավետիսյան «Պաշտոնական ոճ» և այլն) ունեն, այսպես կոչված, ոլորտային նշանակություն:

4.2. ԻՐԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՃԵՐ

Իրադրական ոճերի տարբերակման վերաբերյալ կան տարակարծություններ: Նորագույն շրջանի ոճագիտական առաջին աշխատանքներում մատուցվում էին լեզվական մակարդակի նկարագրական գիտելիքներ իրադրական ոճերի վերաբերյալ: Ըստ էության, ակադեմիկոս Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը մեզանում առաջիններից էին, որ փորձեցին տալ իրադրական ոճերի սահմանումը, որը, սակայն, մեր կարծիքով հեռու է ամբողջական և վստահելի լինելուց:Լեզվաբանները ընդգծում են գործառական և իրադրական ոճերի առանձին տեսակների միջև որոշակի կապի գոյությունը: Ըստ այդմ էլ առանձնացվում են իրադրական ոճերի տարատեսակները՝ *հաղորդատվական, ուսուցողական, մտերմական, հանդիսավոր, բանավիճային, կատակահեգնական* և *երգիծական* (Պ. Պողոսյան), *հանդիսավոր-պաշտոնական, մտերմիկ-փաղաքշական, հումորի և երգիծանքի (ծաղրական),* ինչպես նաև՝ *ուսուցողական, խրատական, հաղորդատվական, բանավիճային* (Լ. Եզեկյան) և այլն: Ինչպես տեսնում ենք, չկա միասնական մոտեցում, ու

[10] Տե՛ս **Լ. Եզեկյան**, Հայերենի գործառական ոճերը, Եր., 1999, էջ 25:

որոշակիորեն տարբեր են դասակարգման սկզբունքները: Եվ դա ունի իր օբյեկտիվ պատճառները: Պատահական չէ, որ իրադրական ոճերի ուսումնասիրության հարցը այսօր ոչ միայն հայ, այլև օտար լեզվաբանների գիտական հետաքրքրությունների շրջանակից դուրս է:

Ժամանակակից հետազոտողները, հիմք ընդունելով նախորդ հետազոտողների դասակարգումը, հարստացնում են հարցի նկարագրությունը:

Գ Լ Ո Ւ Խ ՀԻ Ն Գ Ե Ր Ո Ր Դ

ԼԵԶՎԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ-ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

5.1. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Սկզբնապես քննության են ենթարկվել պատկերավորման հետևյալ միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում: Անդրադարձել ենք հատկապես այն հեղինակների հարցադրումներին, որոնք որոշակի ներդրում են ունեցել հարցի ուսումնասիրության մեջ:

Մակդիր: Լեզվի պատկերավորման համակարգի տարբեր միջոցների, մասնավորաբար մակդիրի մասին կարևոր դիտարկումներ ունի Պ. Պողոսյանը: Ըստ իրենց արտահայտության, կիրառության, գործառության առանձնահատկությունների՝ մակդիրները բաժանել է հետևյալ տեսակների՝ ա. փոխաբերական և ոչ փոխաբերական, բ. խոսքային և լեզվական, գ. գունային[11]: Ոճագետը ուշադրություն է դարձել դիցաբանական, պատմական, բանահյուսական մակդիրներին (Գայլ Վահան, Մայր Հայաստան և այլն): Հեղինակը համակարգել է նյութը:

Հարցի ուսումնասիրության պատմության մեջ մեծ է Ա. Մարությանի ներդրումը: Նա կիրառում է «գեղարվեստական մակադրություններ» եզրույթը: Ըստ հետազոտողի՝ մակդիրն ունի անհատական բնույթ, այսինքն՝ սուբյեկտիվ կողմ. այն արդյունք է գրողի գեղարվեստական մտածողության: Ա. Մարությանը մերժելի է համարում «գունային մակդիրներ» անվանումը, առաջարկում գույնով բնորոշվող մակդիրներ անվանումը[12]: Ըստ բովանդակության՝ առանձնացնում է՝ ա. նկարագրական, բ. քնարական, գ. գույնով բնորոշվող, դ. մշտական մակդիրներ խմբերը:

Ժամանակակից լեզվաբանները շարունակում են ուսումնասիրել մակդիրի ոճական արժեքը:

---

[11] Առավել մանրամասն տե՛ս **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., 1991, էջ 46-48:

[12] Տե՛ս **Ա. Մարության**, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000, էջ 153:

Համեմատություն: Ըստ «Ոճաբանական տերմինների» բառարանի՝ համեմատությունը ոճական դարձույթ է, այն երկու առարկաների կամ երևույթների համադրումն է՝ նրանցից մեկը մյուսի նմանությամբ կամ տարբերությամբ բնորոշելու համար[13]:

Ժամանակակից հետազոտողների դիտարկմամբ՝ համեմատությունը գործածվում է բոլոր ոճերում. գիտական գրականության մեջ ավելի հավաստի ու համոզիչ է դարձնում դատողությունը, գեղարվեստական խոսքին հաղորդում է պատկերավորություն, ԶԼՄ-ների լեզվին՝ ամենատարբեր արտահայտչական նրբերանգներ՝ հստակություն, հավաստիություն, գեղարվեստականություն, այս կամ այն հատկանիշի առանձնաբար ընդգծում, պաշտոնական խոսքին՝ ճշգրտություն, առարկայականություն և այլն[14]:

Փոխաբերություն: Հարցի մասին եղած ուշագրավ դիտարկումները, ըստ էության, ամփոփել է Օ. Բաբայանը: Նա հրատարակել է «Փոխաբերությունը արդի հայերենում» գիրքը, որը նոր որակի բարձրացրեց հարցի քննությունը: Փոխաբերությունը հնարավորություն է տալիս նմանությամբ, առնչակցությամբ համեմատություն կատարել, վեր հանել տարբեր առարկաների, երևույթների կապերը և դրանով իսկ խոսքը դարձնել առավել տպավորիչ[15]: Ըստ հետազոտողի՝ հրապարակախոսական գրքերը, ակնարկները, նամակները, հուշագրությունները, ճանապարհորդական նոթերը առավել շատ են պարունակում փոխաբերություններ, քանզի հրապարակախոսական տարրեր ունենալով հանդերձ՝ մոտենում են գեղարվեստական ոճին: Հեղինակի ուսումնասիրությունները էականորեն հարստացրին հարցի մասին եղած դիտարկումները:

Անձնավորում: Գ. Վահանյանը առաջիններից է, որ ուսումնասիրել է անձնավորումը: Նա գրում է. «Գրողները հաճախ բնության անշունչ առարկաներին, երևույթներին, բույսերին, կենդանիներին օժտում են մարդկային հատկանիշներով: Անշունչ առարկաները մարդկանց նման խոսում են, մտածում են: Անձնավորումը որպես լեզվաարտահայտչական միջոց ծառայում է գրողին՝ նրա տրամադրությունները, գաղափարները հուզիչ և խոր արտահայտելու համար»[16]: Հեղինակը բերում է անձնավորման գործածության օրինակներ Շիրազի, Թումանյանի գործերից, փաստում, որ այն հատուկ է գրողների լեզվին ու ոճին: Անձնավորումը տպավորություն ստեղծելու հրաշալի միջոց է:

---

[13] Տե՛ս **Ֆ. Խլղաթյան**, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Եր., 1976, էջ 53:

[14] **Յու. Ավետիսյան, Ա. Սարգսյան, Ն. Ներսիսյան** և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 276:

[15] **Օ. Բաբայան**, Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998, էջ 8:

[16] Տե՛ս **Գ. Վահանյան**, Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Եր., 1956, էջ 94:

Հայ իրականության մեջ անձնավորման առաջին ամփոփ սահմանումը տվել են Գ. Ջահուկյանը, Ֆ. Խլղաթյանը: «Անձնավորումը այն դարձույթն է, որի դեպքում անշունչ առարկաներին և կենդանիներին վերագրում են մարդկային հատկություններ»[17]: Ըստ հեղինակների՝ անձնավորումը սերտորեն կապված է փոխաբերության հետ, նրա մի դրսևորումն է:

5.2. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հայ ոճագիտական մտքի պատմության մեջ անդրադարձ է կատարվել արտահայտչական ամենաբազմազան միջոցներին՝ ճարտասանական դարձույթներ, կրկնություններ, աստիճանավորում, շրջադասություն, խոսքի զեղչում, հակադրություն և այլն:

Ճարտասանական դարձույթներ: Ճարտասանական դարձույթներն են ճարտասանական հարցը, ճարտասանական բացականչությունը, ճարտասանական դիմումը:

Ժամանակակից լեզվաբանների կարծիքով այս միջոցը կիրառելի է հատկապես բանավիճային խոսքում, կամ երբ խոսողը լսարանի առջև քննարկում է վիճելի խնդիր, որը ակնհայտորեն կարող է տարակուսանք ու նաև հարցումներ առաջացնել[18]: Ճարտասանական դարձույթների կիրառմամբ ակտիվանում է խոսքի ազդեցությունը՝ դառնալով աշխույժ, բազմազան:

Կրկնություն: Նոր ժամանակներում կրկնությանը առաջին անգամ հանգամանորեն անդրադարձել են Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը: Նրանք կրկնությունը համարում են բանադարձման տեսակ, որի դեպքում միևնույն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը ասվում է երկու կամ ավելի անգամ՝ խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու, նրա հուզականությունն ուժեղացնելու նպատակով[19]: Հեղինակները կրկնության դրսևորումներ են դիտարկում զուգահեռականությունը (շարահյուսական կառուցվածքի կրկնություն), խաչաձևումը (կառուցվածքի շրջումը): Կրկնության առանձին տեսակներին անդրադարձել են նաև Ս. Մելքոնյանը, Պ. Պողոսյանը, Լ. Եզեկյանը, Թ. Շահվերդյանը՝ ամբողջացնելով հարցի մասին եղած կարծիքները:

Նշենք, որ կրկնությունից պետք է տարբերակել կրկնաբանությունը, որը մերժելի երևույթ է, տրամաբանական սխալ, ըստ էության՝ ոճական թերություն:

Հակադրություն: Հակադրության՝ որպես խոսքի կառուցման ազդեցիկ արտահայտչական միջոցի ոճական դերի ու նշանակության մասին հետաքրքիր

---

[17] **Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան**, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Եր., 1976, էջ 65:

[18] Տե՛ս **Յու. Ավետիսյան, Ա. Սարգսյան** և ուրիշներ, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եր., 2016, էջ 261:

[19] Տե՛ս **Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան**, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Եր., 1976, էջ 67-68:

ու համոզիչ վերլուծություններ են կատարել Ս. Մելքոնյանը, Ա. Մարությանը, Լ. Եզեկյանը, Լ. Մարգարյանը և այլք:

Հարցադրումների խորությամբ և ինքնատիպությամբ ուշագրավ է Պ. Պողոսյանի ուսումնասիրությունը: Նա քննել է ներհակությամբ կազմվող ձևերը՝ հակադրություն, հակադարձում, բաժանում, շրջում, խաչակերպ, անտրամաբանականություն, երկդիմություն, երկսայրաբանություն, իմաստականություն: Հակադրությունը որակում է որպես ոճական «ուժեղ» արտահայտչամիջոց, ներկայացնում դրա ձևավորման չորս եղանակ՝ ա. առարկան հակադրվում է հակադրական հատկանիշներով բնութագրվող մի այլ առարկայի, բ. իմաստով ներհակ, հակադիր գաղափարները բնութագրվում են նույն հատկանիշով, գ. միևնույն առարկան ստանում է հակադրական բնութագրություններ, դ. հակադրությունը ոչ թե գաղափարների մեջ է, այլ բառերի, և կամ գաղափարների միջև դրված հակադրությունը ձևական է, բովանդակության հետ չկապված[20]: Հետագա ուսումնասիրողները ավելի հարստացրին հարցի ուսումնասիրության պատմությունը:

Աստիճանավորում: Աստիճանավորման տեսական հիմունքները սկզբնապես փորձել է շարադրել Գ. Վահանյանը, որը տալիս է (գրադացիա) «աստիճանավորում» տերմինը: Ըստ նրա՝ այն տարածում ունի բոլոր ոճերում: Գ. Ջահուկյանը, Ֆ. Խլղաթյանը աստիճանավորումը սահմանում են հետևյալ կերպ. «Աստիճանավորումը այն բանադարձումն է, որի դեպքում իրար են հաջորդում իմաստով մերձավոր բառեր՝ իմաստի աստիճանական ուժեղացմամբ»[21]: Ֆ. Խլղաթյանը տարբերակել է բարձրացող և իջնող աստիճանավորումը:

Ժամանակակից հետազոտողները կարևորում են աստիճանավորման կառուցումը. այն ստեղծվում է քերականորեն, տրամաբանական համասեռ շարքերի, թվարկումների միջոցով: Աստիճանավորման փլուզումը անխուսափելի է, եթե առկա է հոմանիշների ոչ ճիշտ դասավորություն, իմաստային նրբերանգների շփոթ և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջադրված հիմնախնդրի ուսումնասիրության ընթացքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ասպարեզում եղած գրականությունը ուսումնասիրելով՝ հանգել ենք այն մտքին, որ հայ ոճագիտական մտքի պատմությունը ժամանակագրական առումով կարելի է բաժանել հետևյալ

---

[20] Առավել մանրամասն տե՛ս **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., 1991, էջ 165-169:

[21] **Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան**, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Եր., 1976, էջ 72:

շրջափուլերի՝ ա. 1950-60-ական թթ., երբ նոր ժամանակներում ոճագիտական հարցերը դառնում են քննարկման առարկա՝ զուտ լեզվական խնդիրներին զուգահեռ, բ. 1970-90-ական թթ., երբ ստեղծվում են ոճագիտական մեծարժեք ուսումնասիրություններ, և ոճագիտության հարցերը դառնում են գիտական լուրջ քննարկումների առարկա. ոճագիտությունը դառնում է հատուկ մշակված և ուրույն գիտակարգ, գ. 2000-2020-ական թթ., երբ հայ ոճագիտական միտքը հարստանում է նորանոր ուսումնասիրություններով, ձեռնարկներով ու դասագրքերով, և հատուկ քննության առարկա են դառնում նաև առանձին գործառական ոճեր:

2. Հնչյունային ոճագիտության հիմնական բաղադրիչների՝ բաղաձայնույթի, առձայնույթի, ինչերանգի, դադարի, շեշտի, հանգի վերաբերյալ սկզբնապես ներկայացվել են այսպես կոչված լեզվական մակարդակի նկարագրություններ, որոնց հաջորդել են ոճաբանական վերլուծություններ, դասակարգումներ: Լեզվի հնչյունային կառուցվածքի ոճական բաղադրիչները ճանաչված և նկարագրված են ընդհանուր լեզվաբանության տիրույթում: Դրանք վերստին և նորովի դարձան ուսումնասիրության նյութ ոճագիտության մեջ: Հնչյունների արտահայտչական հնարավորությունները թեև սահմանափակ են, սակայն դրանք, այնուամենայնիվ, անտեսվել չէին կարող: Հնչյունային ոճական միավորների կիրառության վերլուծությունները ինքնանպատակ չեն, այլ բովանդակության նրբերանգները գիտականորեն նկարագրելու պահանջ: Այսօր հնչյունային-ոճական առանձին միավորներ պահանջում են խոր քննություն, ինչպես նաև դրանց արտահայտչական դերի հանրայնացում: Ներկայումս լեզվաբանները կարևորում են արտասանական ավելի փոքր տարրերի՝ որպես խոսքի հնչյունական համակարգի կառուցման անհատական բաղադրիչների ուսումնասիրությունը:
3. 1970-80-ական թթ. տեսական գրականության մեջ հատուկ ուսումնասիրության նյութ դարձան բառային ոճագիտության հիմնահարցերը: Լեզվական մակարդակին վերաբերող ուսումնասիրություններից աստիճանաբար անցում կատարվեց խոսքային-ոճական մակարդակի ուսումնասիրությունների. բառը՝ բառային-լեզվական միավորը, քննվում և գնահատվում է որպես ոճական-արտահայտչական միավոր:
4. Ձևաբանական-ոճագիտական աշխատանքներում հանգամանորեն քննվել են խոսքի մասերի գործածության յուրահատկությունները, քերականական զուգաձևությունները, գեղարվեստական գրականությունից վերցրած օրինակների միջոցով ներկայացվել են այս

կամ այն խոսքի մասի կամ բառաձևի ոճական կիրառությունները: Այս ասպարեզում կատարվել է հսկայածավալ աշխատանք:

5. Շարահյուսական ոճագիտությանը վերաբերող աշխատանքներում հիմնականում ներկայացվել են շարահյուսական դարձույթների որոշակի տեսակներ՝ նախադասության ներգործական և կրավորական կառույցներ, խնդրառություն, միակազմ և երկկազմ, բարդ նախադասություններ, երկրորդական նախադասություններ և դրանց կապակցության միջոցները: Այս ոլորտի խնդիրները տակավին ոճագիտական հիմնարար ուսումնասիրության կարիք ունեն, քանի որ շարահյուսության «ոճական հնարավորությունները» խիստ բազմազան են, և դրանց ամբողջական բացահայտումն ու իրացումը մեծ ազդակ կարող են դառնալ հայոց լեզվի խոսքարվեստի զարգացման համար:
6. Տարատեսակ ոճերի դասակարգման հարցը հայ ոճագիտության մեջ մշտապես եղել է քննարկման առարկա: Դասակարգման սկզբունքները մշակվել են աստիճանաբար՝ հնարավորություն ստեղծելով գիտական վերլուծության նոր չափանիշների ու մեթոդների ձևավորման: Դասակարգելիս սկզբնապես հաշվի են առնվել առանձին հատկանիշներ կամ գլխավորապես մեկ հիմնական հատկանիշ: Հետագայում մշակվեց և հայ ոճագիտական գրականության մեջ տարածում գտավ ոճերի (մասնավորապես գործառական ոճերի) բազմահատկանիշ դասակարգման սկզբունքը: Ըստ այդ հատկանիշների՝ առանձնացվում է գործառական ոճերի հինգ հիմնական տեսակ՝ պաշտոնական կամ վարչա-գործարարական, գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական, լրագրային-հրապարակախոսական, որոնք տարբեր աշխատանքներում տարբեր անվանումներով են հանդես գալիս: Գործառական ոճերը մեզանում համեմատաբար քիչ են ուսումնասիրված: Կան տարակարծություններ իրադրական ոճերի տարատեսակների ըմբռնման վերաբերյալ: Ոճերի տեսակների ու ենթատեսակների ավելի խոր և համակարգված քննությունը երևան կարող է բերել լեզվական նոր փաստեր և մեծապես կնպաստի լեզվի գործառման ոլորտներում հայերեն խոսույթի մշակմանն ու զարգացմանը:
7. Հայ ոճագիտական մտքի պատմության մեջ լեզվի պատկերավորման-արտահայտչական միջոցները տարբեր անվանումներով են ներկայացվել: Հարցի ուսումնասիրության պատմության մեջ որչափ էլ տարբեր են եղել դրանց անվանումները, բաժանումները, դասակարգումները, միևնույնն է, լեզվական միջոցների բնույթը, բովանդակությունը, նկարագրությունը չեն փոխվել: Այս բնագավառը բավարար չափով ուսումնասիրված է, սակայն անելու շատ բան դեռ կա, քանզի պատկերավորման և արտահայտչական զանազան միջոցների

ոճական նոր հնարավորությունների բացահայտումները հայ լեզվակրի համար կարող են բացել խոսքի արտահայտիչ և ազդեցիկ կառուցման նորանոր հնարավորություններ:

8. Հայ ոճագիտական միտքը զբաղեցրել է շատ լեզվաբանների, սակայն թե՛ հայ ոճագիտական, թե՛ ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ առայսօր բացակայում է միասնական տեսակետ մի շարք հարցերի վերաբերյալ, որոնք ատենախոսության մեջ ներկայացված են. դրանք կարիք ունեն ավելի հիմնավոր մեկնաբանման:
9. Մեր կարծիքով որպես գործառական առանձին ոճ կարելի է դիտարկել գովազդի լեզուն՝ պայմանավորված առանձնահատկություններով, յուրահատկություններով, գործառության ոլորտով:
10. Արդի հայ ոճագիտության մեջ հատուկ և առավել հիմնավոր ուսումնասիրության առարկա կարող է դառնալ տեքստը՝ իր լեզվաոճական բազմազան յուրահատկություններով:
11. Հայ ոճագիտական տերմինաբանությունը երևի ոչ մի ժամանակահատվածում այսքան ուշադրության չի արժանացել, որքան այս վերջին տասնամյակներում: Մանավանդ եթե նկատի առնենք ոճագիտության և խոսքի մշակույթի նկատմամբ աճող հետաքրքրությունը, ապա, կարծում ենք, անհրաժեշտություն է նկատվում ոճագիտական տերմինների նոր բառարանի ստեղծման:
12. Հայ ոճագիտական միտքը սերտ հաղորդակցում է ունեցել ռուս ոճագիտական մտքի հետ. տեսական մի շարք հարցադրումներ և գործնական վերլուծություններ հայ ոճագիտական գրականության մեջ ձևավորվել են ռուս հետազոտողների ազդեցությամբ: Հետևաբար մի շարք տեսական հարցադրումներ կարիք ունեն ինքնուրույն մշակման ու վերլուծության:
13. Հայ ոճագիտական միտքը, բնականաբար, ձևավորվել ու զարգացել է աստիճանաբար: Սկզբնապես (1950-1960-ական թթ.) հիմնականում եղել են լեզվական մակարդակի գնահատումներ, ժամանակի ճանաչված լեզվաբանների կողմից (Գ. Սևակ և ուրիշներ) նկարագրվել են առանձին թերթերի և առանձին հեղինակների գրական գործերի ոճական որոշ յուրահատկություններ: Հետագայում (հաջորդ երկու փուլերում) դրանց հաջորդել են խոսքային մակարդակի տեսական ու գործնական վերլուծություններ, ոճաբանական դասակարգումներ, ոճաբանական խորքային քննարկումներ, բացատրվել են լեզվական տարբեր միավորների ոճական նրբությունները, յուրատակությունները: Ոլորտի վերաբերյալ մշակվել է գիտական տերմինաբանություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.

1. **Բերբերյան Վ.,** «Ակնարկներ բառային ոճագիտական մտքի պատմության (1950-2020-ական թթ.)» // «Հայագիտական հանդես», թիվ 1 (60), Երևան, 2023, էջ 25-36:
2. **Բերբերյան Վ.,** «Դարձվածային ոճագիտության հարցեր (1950-2020-ական թթ.)» // «Եվրոպական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու», թիվ 14 (01), Երևան, 2023, էջ 126-132:
3. **Բերբերյան Վ.,** «Ակնարկներ հայերենի հնչյունային ոճագիտական մտքի պատմության. դադար, հանգավորում, հնչերանգ» հարցեր (1950-2020-ական թթ.)» // «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր», պրակ Բ, թիվ 1, Գյումրի, 2023, էջ 48-57:
4. **Բերբերյան Վ.,** «Ոճերի դասակարգման խնդիրը հայ ոճագիտական ուսումնասիրություններում (1950-2020-ական թթ.)» // «Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր», թիվ 2 (45), Երևան, 2023, էջ 85-100:
5. **Բերբերյան Վ.,** «Քերականական ոճագիտության պատմությունից» // «Հայագիտական հանդես», թիվ 3 (62), Երևան, 2023, էջ 66-81:
6. **Բերբերյան Վ.,** «Հայ հնչյունային ոճագիտության պատմությունից» // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2 (41), Երևան, 2023, էջ 108-117:

БЕРБЕРЯН ВАЛЬТЕР ТИГРАНОВИЧ

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ СТИЛИСТИЧЕСКОЙ МЫСЛИ (1950-Е – 2020-Е ГОДЫ)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянских язык»
Защита состоится 26 января 2024 г. в 15^{00} часов, на заседании специализированного совета ВАК РА 019 по лингвистике, действующего при Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича/ 15)

РЕЗЮМЕ

Актуальность темы

Принято останавливаться на определенном этапе развития языкознания и подводить итоги с экзаменационным обзором. В арменистике есть

фундаментальные труды, посвященные научному наследию известных лингвистов (М. Абегян, А. Айдинян и др.). Г. Джаукян представил историю языкознания, С. Гюльбудагян коснулся развития восточноармянской грамматической мысли. Армянская стилистическая мысль имеет более чем полувековой процесс развития. Написаны монографии и статьи, пора проявить аналитический обзор.

Цели и задачи исследования

Цель диссертации – изучить и представить историю становления и развития армянской стилистической мысли с 1950-х годов до наших дней. В связи с целью исследования возникают следующие проблемы.

1. изучить работы, написанные о стилистической системе армянского языка,
2. проанализировать эти работы,
3. обнаружить особенности формирования и развития армянской стилистической мысли.

Научная новизна диссертации

Это первая попытка такого рода работы о стилистике. Хотя в последние десятилетия опубликован ряд работ по стилистике, в которых имеются интересные и ценные наблюдения, связанные с различными вопросами стилистики, но полное рассмотрение истории армянской стилистической мысли осталось вне внимания лингвистов.

Методология работы

Методологической основой является сочетание и анализ существующих теоретических положений.

Структура диссертации

Работа состоит из введения, пяти глав, заключения, списка литературы.

Во введении представлена история формирования стилистики. В истории армянской стилистической мысли различают несколько периоды.

В первой главе ("Фонетическая стилистическая мысль") затронуты основные компоненты фонетической стилистики: аллитерация, ассонанс, звукоподражательное слово, тембр, пауза, рифма.

Во второй главе ("Лексическая стилистическая мысль") изучены лексико-семантические группы и расслоение лексики, интерпретировалы стилистический анализ.

В третьей главе ("Грамматическая стилистическая мысль") изучены работы, написанные как о морфологической, так и о синтаксической стилистике, проанализированы положения в различных исследованиях. Заметно, что стилистические возможности морфологических порядков ограничены, синтаксическая система обладает большими и широкими стилистическими возможностями.

В четвертой главе (“Типы стилей. Принципы классификации") представлены разные принципы классификации стилей по ситуации, характеристикие авторской речи (индивидуальные стили) и т.д., а также основные типы функционального стиля - официальный, научный, литературно-художественный, разговорный, ораторская речь (язык медиа).
В пятой главе (“Образно-выразительная система. Краткая история стилистики“) рассмотрено стилистическое значение разных средств выразительности.
В заключении обобщены основные результаты научного исследования.
Объем диссертации составляет 122 страниц.

VALTER TIGRAN BERBERYAN

THE PROBLEMS OF DEVELOPMENT OF ARMENIAN STYLISTIC THOUGHT (FROM THE 1950S TO THE 2020S)

Thesis for PhD degree in Philology, speciality 10.02.01, «Armenian Language»
The defense will be held on 26 January, 2024 at 15^{00}, at the session of Specialized Council on Linguistics of 019 SCC RA
in the Institute of Language after Hr. Acharian NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich St. 15)

SUMMARY

The modernity of the theme: It's an accepted fact to stop at a certain moment in the development of linguistics and summarize the achievements with an examination view. We have fundamental works dedicated to the scientific heritage of famous linguists (M. Abeghyan, A. Aydinyan, etc.). G. Jahukyan presented the history of linguistics, S. Gyulbudaghyan referred to the development of Eastern Armenian grammatical thought. Armenian stylistic thought has a development process of more than half a century. Monographs and articles have been written, and it is time to show an analytical attitude. Especially if we take into account the development of stylistics and speech culture, then, we think, it is necessary to bring together the existing with certain assessments.

The aims and problems of the research: The purpose of the dissertation is to study and present the history of the formation and development of Armenian stylistic thought from the 1950s to the present day. Due to the purpose of the research, the following problems arise.

1. study the works written about the stylistic system of the Armenian language,
2. to analyze these works with a critical eye,

3. to discover the peculiarities of the formation and development of Armenian stylistic thought.

The scientific novelty of the thesis: It is the first attempt of such a work in stylistics. Although a number of works on stylistics have been published in recent decades, in which there are interesting and valuable observations related to various issues of stylistics, but a complete examination of the history of Armenian stylistic thought has been left out of the attention of linguists.

The methodology of the work: The work was done using several methods. The descriptive, analytical and comparative methods were combined. The methodological basis is the combination of the existing theoretical provisions. We have presented the research by language levels and by chronology.

The structure of the thesis: The work consists of introduction, five chapters with their corresponding subchapters, conclusions and bibliography which states the sources of the used literature, periodicals.

In **Introduction** we've presented the history of the formation of stylistics. Periods are distinguished in the history of Armenian stylistic thought.

In the first chapter ("Phonetic Stylistics thought") we have studied the works written about phonetic stylistics of the Armenian language, the provisions in various researches. Reference has been made to the main components of phonetic stylistics: alliteration, assonance, onomatopoeic word, timbre, pause, rhyme and so on.

In the second chapter ("Lexical stylistics thought") we examined the semantic groups and exfoliation of lexicon based on S. Melkonyan and S. Eloyan's stylistic classifications and explained the stylistic analysis.

In the third chapter ("Grammatical stylistics thought") we have presented the groups of morphological and syntactical stylistics are distinguished, each of which has an expression uniqueness.

In the fourth chapter ("Types of styles. Principles of classification") reference was made to the different principles of classification of styles according to the situation, characteristics of the author's speech (individual styles) and so on. We have presented the functional styles that have become widespread in modern Armenian stylistics, the main types: official or formal, scientific, artistic literary, casual or informal, oratorical speaking (the language of Media).

In the fifth chapter ("Imaging-expression system. A brief history of stylistics") discussed the stylistic significance of different means of expression.

In the section of **Conclusions** we've summarized all main and essential results that have been generalized during the scientific research due to modern attitudes.

The total volume of the thesis comprises 122 pages. Our dissertation also contains an appendix. We have six articles published on this topic.